
**ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ՕԲՅԵԿՏՆԵՐԸ,
ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԻՐԱՑՄԱՆ ԵՎ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԻՐԱՎԱԶԱՓՈՒԹՅԱՆ ՍՏՈՒԳՄԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ**

ԳԵՂԱՄՅԱՆ ԷԼԻՆԱ

ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի սահմանադրական
իրավունքի ամբիոնի դասախոս,
«ԹԱՌԻԵՐ ԻՆԹԵՐՆԵՅՇՆԼ ՔՈՆՍԱԼԹԱՆՏՍ» ՓԲԸ
իրավաբանական դեպարտամենտի ղեկավար
DOI: 10.63925/18294847-2026.bl21-03

Ամփոփագիր. Սույն հոդվածում քննարկվում են վարչարարության բողոքարկման իրավունքի իրացման շրջանակը և սահմանները: Մարդու իրավունքների եվրոպական դատարանի, Եվրոպական Միության Արդարադատության դատարանի, համեմատական վարչական իրավունքի՝ Գերմանիայի, Ֆրանսիայի, Միացյալ Թագավորության, Ամերիկայի Միացյալ Նահանգների, Կանադայի փորձի հիման վրա սույն գիտական հոդվածի շրջանակում առաջ է քաշվում այն գաղափարը, որ վարչական մարմինների՝ բողոքարկման ենթակա գործունեության շրջանակը պետք է որոշվի ոչ թե վարչարարության ձևական դասկարգումից, այլ վարչարարության՝ անհատի իրավունքների վրա ազդեցությունից ելնելով:

Գիտական հոդվածի շրջանակում քննարկման առարկա է դարձվում վարչարարության բողոքարկման համատեքստում դատական վերանայման թույլատրելի ինտենսիվության հարցը: Արդյունքում գիտական հոդվածում առաջ է քաշվում հավասարակշռված մոդել ունենալու անհրաժեշտությունը, որը հնարավորություն կտա երաշխավորել սուբյեկտիվ իրավունքների պաշտպանությունը՝ մյուս կողմից ապահովելով իշխանությունների բաժանման սկզբունքի և վարչաիրավական հայեցողության երաշխավորումը: Արդյունքում հեղինակը եզրակացնում է, որ վարչարարության դատական բողոքարկումը ամբողջական իրավազորության դատարանի կողմից վարչարարության իրավաչափության անհրաժեշտ աստիճանի ստուգումը երաշխավորելուն զուգահեռ պետք է բացառի քաղաքական որոշում ու վարչաիրավական հայեցողություն ենթադրող հարցերում դատարանի կողմից գործադիր իշխանության ընտրած քաղաքականության հիմնավորվածության քննարկում, այն է՝ այնպիսի հարցերի քննարկում, որոնք ի սկզբանե գործադիր իշխանության իրավասության տիրույթում են:

Բանալի բառեր. վարչարարության բողոքարկում, ամբողջական իրավազորության դատարան, իշխանությունների բաժանում, դատական վերանայման շրջանակ և սահմաններ, վարչարարության բողոքարկման օբյեկտներ:

Վարչական իրավունքը, մի կողմից նպատակ ունենալով կանոնակարգել վարչական մարմինների գործունեության սահմանները, մյուս կողմից՝ հավասարապես

միտված է ապահովելու վարչարարության հասցեատերերի իրավունքների ու օրինական շահերի պաշտպանությունը, այդ թվում՝ իրենց իրավունքներն ու օրինական շահերը խախտող վարչարարության բողոքարկման հնարավորության ընձեռմամբ: Այս համատեքստում վարչարարության բողոքարկման իրավունքը վարչական իրավունքում անձին տրվող ամենահիմնարար իրավունքներից մեկն է: Եվրոպական ժամանակակից վարչական իրավունքում վարչարարության բողոքարկման իրավունքը դիտարկվում է ոչ թե որպես սովորական վարության իրավունք, այլ ժողովրդավարական պետության՝ պատշաճ վարչարարության, արդյունավետ դատական պաշտպանության իրավունքի և իրավական օրինականության սկզբունքների վրա հիմնված կարևորագույն սահմանադրական հանձնառություն:

Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին Եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա)¹ 6-րդ հոդվածը, երաշխավորելով քաղաքացիական իրավունքների ու պարտականությունների պաշտպանությամբ անկախ դատարանին հասանելիությունը, ներառում է նաև քաղաքացիական իրավունքների ու պարտականությունների առնչությամբ վարչական մարմինների գործողությունները, անգործությունը և վարչական ակտերը բողոքարկելու իրավունքը: Մարդու իրավունքների Եվրոպական դատարանը (այսուհետ՝ ՄԻԵԴ) վարչարարության բողոքարկման իրավունքը համարում է արդար դատաքննության իրավունքի բաղադրատարր՝ ընդգծելով, որ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված երաշխիքները որևէ արժեք չեն ունենա, եթե անձի համար ապահովված չէ դատարան դիմելու հնարավորությունը²:

Վարչարարության բողոքարկման իրավունքի բնորոշման համատեքստում կարևորագույն նշանակություն ունի այն հարցի պարզաբանումը, թե վարչարարության հատկապես ո՞ր դրսևորումների բողոքարկումն է ներառված այս հիմնարար իրավունքի շրջանակում: Եվրոպական երկրների օրինակելի փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ բողոքարկման իրավունքի օբյեկտների շրջանակը որոշելու հիմքը ոչ թե վարչարարության կամ վարչական ակտերի ձևական դասակարգումն է, այլ այն իրավական հետևանքները, որն ունենում է վարչական մարմնի կոնկրետ գործունեությունը: ՄԻԵԴ-ն արձանագրել է, որ դատարան դիմելու իրավունքը պետք է լինի «պրակտիկ և արդյունավետ»³, իսկ դատարան դիմելու իրավունքի արդյունավետության ապահովման համար անձը նախևառաջ պետք է ունենա «հստակ,

¹ Եվրոպայի խորհրդի Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին Եվրոպական կոնվենցիա (European Convention for the Protection of Human Rights and Fundamental Freedoms, ECHR), 1950 թ., ETS No. 5, ընդունվել 4 նոյեմբերի 1950 թ.:

² Տե՛ս, օրինակ, *Golder v. The United Kingdom*, Application No. 4451/70, European Court of Human Rights, Judgment of February 21, 1975, para. 35, *Malhous v. The Czech Republic*, Application No. 33071/96, European Court of Human Rights, Judgment of July 12, 2001, para. 55:

³ Տե՛ս *Bellet v. France*, Application No. [23805/94](#), European Court of Human Rights, Judgment of December 4, 1995, § 38:

պրակտիկ հնարավորություն՝ բողոքարկելու իր իրավունքներին միջամտող ակտը⁴»։ Այդ իրավունքի պրակտիկ ու արդյունավետ բնույթը կարող է կասկածի տակ դրվել այն դեպքերում, երբ վարութային արգելքներն արգելակում կամ սահմանափակում են դատարան դիմելու հնարավորությունը։ ՄԻԵԴ-ը, օրինակ, այդպիսի անհամաչափ և դատարան դիմելու իրավունքի արդյունավետության ու պրակտիկության պահանջների հետ անհամատեղելի է համարում այն իրավիճակները, երբ դատարանների կողմից վարութային կանոնների չափազանց խիստ մեկնաբանությունը հանգեցրել է դիմողի՝ դատարան դիմելու իրավունքից զրկվելուն⁵։

Եվրոպական Միության Արդարադատության դատարանը ևս վարչարարության բողոքարկման իրավունքի օբյեկտային սահմանները որոշելիս առաջնորդվում է վարչարարության դրսևորումների ոչ թե ձևական դասակարգմամբ՝ հիմք ընդունելով ԵՄ հիմնարար իրավունքների մասին հռչակագրի 47-րդ հոդվածը, որով սահմանված՝ արդյունավետ դատական պաշտպանության իրավունքը պահանջում է, որ պարտադիր իրավական հետևանք ունեցող բոլոր ակտերը բաց լինեն բողոքարկման համար։ Այս նույն սկզբունքն է դրված վերը հիշատակված՝ վարչարարության վերաբերյալ ReNEUAL կանոնների և ԵԽ նախարարների կոմիտեի հիշատակված՝ CM/Rec(2007)7 հանձնարարականի հիմքում, որոնցից ևս ակնհայտորեն բխում է, որ բողոքարկման իրավունքի առկայությունը պետք է որոշվի վարչարարության՝ անհատի վրա ունեցած իրավական ու փաստացի ազդեցությունից ելնելով։

Միջազգային փորձի ուսումնասիրությունը ևս ցույց է տալիս, որ վարչարարության բողոքարկման իրավունքն իր ժամանակակից էությամբ ընդգրկում է վարչական մարմինների ցանկացած տեսակի «ձևական» և «ոչ ձևական» արտահայտություն ունեցող ակտերը, հրամանները, գործողություններն ու անգործությունը վիճարկելու իրավունքը՝ պայմանով, որ այն անձի համար առաջացնի ուղղակի և նշանակալից իրավական հետևանքներ, կամ «անձի իրավունքների, ազատությունների կամ օրինական շահերի վրա ազդի՝ անկախ այդպիսի ակտի օրենսդրական դասակարգումից⁶։ Այսպիսով՝ ԱՄՆ և Կանադայի պրակտիկայում այժմ արմատավորված է այն գաղափարը, որ դատավարական կամ ընթացակարգային

⁴ Տե՛ս, օրինակ, նույն տեղում, § 36; Nunes Dias v. Portugal, Application No. [69829/01](#), European Court of Human Rights, Judgment of April 10, 2003, § 36:

⁵ Տե՛ս, օրինակ, Pérez de Rada Cavanilles v. Spain, Application No. 116/1997/900/1112, European Court of Human Rights, Judgment of October 28, 1998, § 49; Miragall Escolano and Others V. Spain (Applications nos. [38366/97](#), [38688/97](#), [40777/98](#), [40843/98](#), [41015/98](#), [41400/98](#), [41446/98](#), [41484/98](#), [41487/98](#) and [41509/98](#)), European Court of Human Rights, Judgment of April 25, 2000, § 38; Sotiris and Nikos Koutras ATTEE v. Greece (Application no. [39442/98](#)), European Court of Human Rights, Judgment of February 16, 2001, § 20; Běleš and Others v. the Czech Republic, Application No. 47273/99, European Court of Human Rights, Judgment of February 12, 2003, § 50; RTBF v. Belgium, Application No. 50084/06, European Court of Human Rights, Judgment of September 15, 2011, §§ 71-72, 74:

⁶ Տե՛ս, օրինակ, ԱՄՆ Administrative Procedure Act 5 USC § 704, ԱՄՆ Գերագույն դատարանի՝ *Bennett v Spear* 520 US 154 (1997) 177–78, *Canada (Minister of Citizenship and Immigration) v Vavilov* 2019 SCC 65 [23]–[25].

հասկացությունները չեն կարող և չպետք է օգտագործվեն բողոքարկման իրավունքի կիրառման շրջանակի նեղացման նպատակով:

Գերմանիայում արմատավորվել է «օրինականության ամբողջական ստուգման» կոնցեպտը, որի համատեքստում բողոքարկման ենթակա են թե՛ անհատական վարչական ակտերը, թե՛ վարչական անգործությունն «իրավաչափության համապարփակ վերահսկողության» (umfassende Rechtmäßigkeitkontrolle) հիմնարար սկզբունքը⁷: Ֆրանսիական վարչական իրավունքում վարչական ակտի՝ իշխանության չարաշահման կամ անօրինականության հիմքով բողոքարկման ընթացակարգի շրջանակում Պետական խորհրդում վիճարկման ենթակա է ցանկացած վարչական ակտ՝ անկախ նրա պարտադիր ուժից՝ պայմանով, որ այն առաջացնում է «իրավական հետևանքներ» կամ զգալիորեն ազդում է անձի իրավական իրավիճակի վրա⁸: Բրիտանական վարչական իրավունքը նույնպես որդեգրել է բողոքարկման օբյեկտների շրջանակի որոշման ոչ թե ձևական, այլ գործառույթային, բովանդակային մոտեցում՝ դատական վերահսկողության ենթակա համարելով նույնիսկ ոչ օրենսդրական հիմքով ստեղծված կարգավորող մարմնի ակտերը, եթե հիմնավորվում է, որ այդ մարմինն իրականացնում է հանրային իշխանություն :

Այսպիսով, վերոգրյալի հիման վրա՝ կարող ենք եզրակացնել, որ վարչարարության բողոքարկման օբյեկտների շրջանակի որոշումը թե՛ միջազգային փորձի ուսումնասիրության, թե՛ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի ու եվրոպական լավագույն չափանիշների համատեքստում պետք է իրականացվի՝ հիմք ընդունելով վարչական մարմինների գործունեության արտահայտման կոնկրետ ձևի ունեցած ազդեցությունն անձանց իրավունքների վրա:

Չնայած նրան, որ վարչական իրավունքի ժամանակակից համակարգում վարչարարության առանձին դրսևորումներ պետք է ունենան հստակ ամրագրում՝ վարչական ակտերի, հրամանների և այլ անհատական իրավական ակտերի ձևով, և վարչական մարմինների կողմից ընդունման ենթակա ակտերը կամ կատարվող գործողությունների համար վերջիններս պետք է ուղղակիորեն լիազորված լինեն օրենքով, վարչարարության բողոքարկման իրավունքը չի կարող փոխկապակցվածության կամ կախվածության մեջ դրվել օրենսդրական դասակարգումներից և վարչարարության կոնկրետ ձևական արտահայտությունից: Հետևաբար, բոլոր այն դեպքերում, երբ **բողոքարկման օբյեկտը վարչական մարմնի՝ արտաքին ներգործություն ունեցող և անձի իրավունքներին ու օրինական շահերին վերջինիս բողոքարկման իրավունքով օժտելու համար անհրաժեշտ չափով առնչություն ունեցող որևէ ակտ, գործողություն, անգործություն կամ հանրային**

⁷ Տե՛ս, օրինակ, Verwaltungsgerichtsordnung (VwGO) 1960, §§ 42–113; Ulrich Stelkens and others (eds), *German Administrative Law: Introduction* (German Law Archive 2018) <https://germanlawarchive.iuscomp.org/?p=353>, հասանելի է 01.02.2026թ. դրությամբ:

⁸ Տե՛ս Conseil d'État, *Recours pour excès de pouvoir* doctrine; Jean Rivero and Jean Waline, *Droit administratif* (23rd ed, Dalloz 2006) 288–305; Conseil d'État, *Dame Lamotte* (1950) Rec. 110.:

իշխանության իրականացման որևէ այլ ձև է, վարչարարության բողոքարկման իրավունքն առկա է, և այն չի կարող սահմանափակվել կամ բացառվել միայն այն հանգամանքից ելնելով, որ բողոքարկվող ակտը, փաստաթուղթը կամ գործողությունն օրենսդրությամբ նույնաբնույթ ակտին առաջադրվող ձևին չի համապատասխանում. անձի իրավունքների վրա վարչարարության ազդեցությունը պետք է որոշվի ոչ թե դրա արտահայտման ձևով, այլ բովանդակությամբ:

Հայաստանի Հանրապետությունում վարչարարության բողոքարկման օբյեկտների շրջանակի որոշման հիմքում նախևառաջ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 69-րդ հոդվածի 1-ին մասն է, որի համաձայն՝ անձինք իրենց իրավունքները պաշտպանելու նպատակով իրավունք ունեն բողոքարկելու **վարչական ակտերը**, այդ թվում՝ զուգորդվող վարչական ակտերի միջամտող դրույթները, ինչպես նաև **վարչական մարմնի գործողությունը կամ անգործությունը**:

Այլ կերպ ասած՝ Օրենքը վարչարարության բողոքարկման օբյեկտների շրջանակը պայմանավորում է բացառապես Օրենքի համատեքստում «վարչարարություն» հասկացության նեղ իմաստով՝ այդ օբյեկտների, ըստ էության, սպառիչ ցանկում ներառելով միայն վարչական ակտերը, վարչական մարմնինների գործողությունը և անգործությունը, որոնք անձանց համար առաջացնում են փաստական հետևանքներ:

Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգիրքը, մյուս կողմից, նույն տրամաբանությամբ յուրաքանչյուր ֆիզիկական կամ իրավաբանական անձի վարչական դատարան դիմելու իրավունք է վերապահում այն դեպքում, երբ անձի իրավունքները և ազատությունները խախտվել են, նրա վրա ոչ իրավաչափորեն պարտականություն է դրվել, կամ նա վարչական կարգով ոչ իրավաչափորեն վարչական պատասխանատվության է ենթարկվել պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի կամ դրա պաշտոնատար անձի **վարչական ակտով, գործողությամբ կամ անգործությամբ**⁹ (ընդգծումը մերն է):

Վճռաբեկ դատարանը թիվ ՎԴ/11082/05/20 վարչական գործով 17.12.2021 թ. որոշմամբ արձանագրել է, որ օրենսդրի կողմից անձին իրավունք է վերապահվել հայց ներկայացնել ՀՀ վարչական դատարան այն դեպքում, երբ վարչական մարմնի կողմից կայացված վարչական ակտով խախտվում են կամ կարող են խախտվել իր իրավունքները: Այսինքն՝ դատարան վիճարկման հայց ներկայացնելու համար պարտադիր պայման է վարչական ակտի առկայությունը, որն այն վիճարկող անձի համար պետք է ունենա միջամտող ազդեցություն: Այլ կերպ ասած՝ գործող վարչադատավարական կանոնների համաձայն՝ վիճարկման հայցի առարկա կարող է հանդիսանալ բացառապես միջամտող վարչական ակտը: Միաժամանակ, դատարանն արձանագրել է, որ վիճարկման հայցատեսակով որևէ փաստաթուղթ անվավեր

⁹ Տե՛ս Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգիրք, ընդունված է 2013 թվականի դեկտեմբերի 5-ին, սկզբնաղբյուրը՝ ՀՀՊՏ 2013.12.28/73(1013).1 Հոդ.1186.1, հոդված 3:

ճանաչելու պահանջի քննությունը պայմանավորված է այն հանգամանքով, թե արդյո՞ք այդ փաստաթուղթը ՀՀ իրավական համակարգում վարչական ակտ է, թե՛ ոչ, հետևաբար, վիճարկման հայցի հիման վրա հարուցված վարչական գործերի քննության ընթացքում առաջին հերթին անհրաժեշտ է պարզել, թե արդյո՞ք ներկայացված հայցապահանջի նյութական օբյեկտը վարչական ակտ է, թե՛ ոչ:

Չնայած նրան, որ Վճռաբեկ դատարանը վերը հիշատակված որոշման շրջանակներում, ըստ էության, լայն մեկնաբանություն է տվել վարչական ակտ հասկացությանը՝ դրա շրջանակում ներառելով ոչ միայն անձանց համար ուղղակի իրավական հետևանքներ առաջացնող, այլև այդպիսի հետևանքներ առաջացնելուն ուղղված ակտերը, այնուամենայնիվ, գործող օրենսդրության շրջանակներում Վճռաբեկ դատարանը վերահաստատել է այն, որ վարչական դատարանում բողոքարկվել կարող են, հետևաբար՝ դատական կարգով բողոքարկման օբյեկտ են միայն վարչական ակտերը, վարչական մարմինների գործողությունը և անգործությունը: Ընդ որում՝ վիճարկման հայցի քննության ընթացքում պարտադիր պարզման ենթակա է այն, թե արդյո՞ք վիճարկվող ակտը ՀՀ իրավական համակարգում վարչական ակտ է, թե՛ ոչ:

ՀՀ սահմանադրական դատարանը, մի շարք որոշումներով¹⁰ անդրադառնալով արդարադատության մատչելիության, արդար և արդյունավետ դատաքննության իրավունքների երաշխավորման սահմանադրական իրավաչափության խնդիրներին, արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ դատավարական որևէ առանձնահատկություն կամ ընթացակարգ չի կարող խոչընդոտել կամ կանխել դատարան դիմելու իրավունքի արդյունավետ իրացման հնարավորությունը, իմաստազրկել ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված դատական պաշտպանության իրավունքը կամ դրա իրացման արգելք հանդիսանալ, ընթացակարգային որևէ առանձնահատկություն չի կարող մեկնաբանվել որպես ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված դատարանի մատչելիության իրավունքի սահմանափակման հիմնավորում: Դատարանի (արդարադատության) մատչելիությունը կարող է ունենալ որոշակի սահմանափակումներ, որոնք չպետք է խաթարեն այդ իրավունքի բուն էությունը:

ՄԻԵԴ-ն իր հերթին արձանագրել է, որ դատարանի մատչելիության իրավունքը **խաթարվում է այն դեպքում, երբ օրենսդրական նորմերը դադարում են ծառայել իրավական որոշակիության ու արդարադատության պատշաճ իրականացման նպատակներին և խոչընդոտում են անձին հասնել իրավասու դատարանի կողմից իր գործի ըստ էության քննությանը**¹¹:

¹⁰ Տե՛ս 10.12.2013 թվականի թիվ ՍԴՈ-1127, 10.02.2015 թվականի թիվ ՍԴՈ-1190, 03.03.2015 թվականի թիվ ՍԴՈ-1192, 16.06.2015 թվականի թիվ ՍԴՈ-1220, 26.06.2015 թվականի թիվ ՍԴՈ-1222, 10.03.2016 թվականի թիվ ՍԴՈ-1257 և այլն

¹¹Տե՛ս, Dumitru Gheorghe v. Romania, Application No. 33883/06, European Court of Human Rights, Judgment of April 12, 2016, § 28:

Վարչարարության բողոքարկման օբյեկտների շրջանակի որոշման՝ վերը հիշատակված չափանիշների, Սահմանադրական դատարանի ու ՄԻԵԴ քննարկվող դիրքորոշումների համատեքստում ակնհայտ է, որ անկախ նրանից, թե գործող օրենսդրությամբ վարչարարության դրսևորումների ինչ սահմանափակումներ կամ հասկացություններ են նախատեսված, և թե դատարան դիմելու կամ վարչական կարգով բողոքարկման իրավունքի բնորոշումն օրենսդրական մակարդակով բողոքարկման ինչ օբյեկտների թվարկում է ներառում, վարչարարության բողոքարկման իրավունքը՝ որպես թե՛ դատական պաշտպանության և թե՛ պատշաճ վարչարարության իրավունքի բաղադրատարր, որևէ դեպքում չի կարող սահմանափակվել՝ զուտ այն հանգամանքից ելնելով, որ բողոքարկման օբյեկտը չի համապատասխանում օրենսդրությամբ սահմանված կոնկրետ ձևին: Վարչարարության բողոքարկման իրավունքի առկայությունը չպետք է կապվի ներպետական համակարգում վարչարարություն հասկացության բնորոշման կամ վարչարարության դրսևորման ձևերի՝ օրենսդրորեն սահմանափակված շրջանակի հետ: Ընդ որում՝ նշվածը հավասարապես կիրառելի է այն դեպքում, երբ օրենսդրությամբ սահմանված այդ կոնկրետ ձևին, տվյալ դեպքում՝ վարչական ակտին, առավել լայն մեկնաբանություն է տրվում: Բողոքարկման օբյեկտների շրջանակը պետք է յուրաքանչյուր դեպքում որոշվի վարչական մարմնի գործունեության որևէ դրսևորման՝ անձի իրավունքների վրա ազդեցության և այդ ազդեցության՝ իրավաբանորեն արժևորվող նշանակալիության տեսանկյունից, իսկ բողոքարկման իրավունքի՝ ընթացակարգային սահմանափակ պահանջների հիման վրա սահմանափակումները անհամատեղելի են այդ հիմնարար իրավունքի էության հետ: Հետևաբար՝ վարչական դատավարությունում առանձին հայցատեսակների առկայությամբ և դրանց կիրառման սահմանափակ շրջանակով կամ վարչական վարույթում բողոքարկման օբյեկտների «ձևական» շրջանակով պայմանավորված՝ վարչարարության բողոքարկման սուբյեկտին առաջադրվող պահանջներին բավարարող անձի՝ բողոքարկման իրավունքը ժխտելն անթույլատրելի է, իսկ նշված պահանջները պետք է օրենսդրորեն ամրագրվեն, սակայն գործնականում մեկնաբանվեն որպես բացառապես ընթացակարգային, բողոքարկման իրավունքի իրացումն առավել արդյունավետ դարձնող, և ոչ թե այն որևէ պայմաններում սահմանափակող պահանջներ:

Վերը շարադրվածի հիման վրա ուրվագծվում է վարչարարության բողոքարկման իրավունքի կիրառելիության շրջանակը՝ բողոքարկման օբյեկտներից ելնելով¹², ինչպիսի պայմաններում քննարկման ենթակա է բողոքարկման իրավունքի հաջորդ՝ բողոքարկման իրավունքի իրացման սահմանների հարցը, մասնավորապես՝ վարչական դատարանի կողմից վարչարարության իրավաչափության ստուգման սահմանները կամ,

¹² Վարչարարության բողոքարկման օբյեկտների առանձին խումբ են նորմատիվ իրավական ակտերը, որոնց, սույն գիտահետազոտական աշխատանքի ծավալներից ելնելով, անդրադարձ չի կատարվում:

այլ կերպ ասած, վարչարարության բողոքարկման համատեքստում վարչարարության պատշաճության կամ իրավաչափության ստուգման «խորության» աստիճանի որոշումը:

Վարչարարության բողոքարկման իրավունքը, այսպիսով, դատական պաշտպանության և պատշաճ վարչարարության իրավունքների բաղադրատարր հանդիսանալով, ֆիզիկական ու իրավաբանական անձի համար երաշխավորվող **սուբյեկտիվ** իրավունք է, որի իրացման առաջնահերթ նպատակը մասնավոր շահի պաշտպանության նպատակով վարչարարության բողոքարկման բոլոր դեպքերում պետք է լինի ոչ թե վարչարարության օրինականության ապրիօրի, ամբողջական ստուգումը, այլ անձի խախտված իրավունքների վերականգնումը: Այս համատեքստում վարչարարության բողոքարկման իրավունքը պետք է մեկնաբանվի որպես ոչ թե վարչարարության՝ օրենքին ամբողջական համապատասխանության՝ վարչական կամ դատական կարգով ստուգման իրավունք, այլ վարչարարությամբ անձի իրավունքների հնարավոր կամ իրական խախտման դեպքում այդպիսի խախտումների շտկում, կանխարգելում կամ խախտված իրավունքների ամբողջական վերականգնում պահանջելու իրավունք: Այսպիսով՝ մասնավոր շահերի պաշտպանությամբ վարչարարության, այդ թվում՝ նորմատիվ վարչարարության, բողոքարկման **նպատակը**, և, հետևաբար, նաև վարչարարության բողոքարկման բովանդակային սահմանը, վարչարարությունը բողոքարկվող անձի խախտված իրավունքների պաշտպանությունն է¹³:

Վարչարարության բողոքարկման իրավունքի՝ վերը հիշատակված նպատակն ինքնին բավարար չէ վարչարարության բողոքարկման իրավունքի սահմանների ամբողջական ուրվագծման համար, քանի որ չի տալիս այն հարցի պատասխանը, թե խախտված իրավունքների պաշտպանության նպատակով վարչարարության դեմ բերված բողոքը քննելիս հատկապես որն է վարչական դատարանի կողմից վարչարարության իրավաչափության ստուգման շրջանակը: Նշվածն առավելապես կարևորվում է, մի կողմից, իշխանությունների բաժանման ու հավասարակշռման սկզբունքի համատեքստում դատարանի՝ բացառապես գործադիր իշխանության իրավասությունը համարվող հարցերին միջամտելը բացառելու անհրաժեշտության, մյուս կողմից՝ վարչարարության բողոքարկման իրավունքի գործնականում արդյունավետության երաշխավորման համատեքստում կենսական նշանակություն ունեցող՝ «ամբողջական իրավագործության դատարանի կողմից» գործի քննության իրավունքի համատեքստում:

Այսպես, վարչական արդարադատության հասկացության շուրջ ծավալված բանավեճում առավել հետաքրքիր ու գործնական բնույթ են կրում գերմանացի հետազոտողների առաջադրած հարցադրումները՝ վարչական արդարադատության հիմնական նպատակաուղղվածությունը պարզելու կապակցությամբ. այն ուղղված է

¹³ Տե՛ս, Կարինե Զլավյանն ընդդեմ ՀՀ կառավարությանն առնչվող անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի թիվ ՎԴ/6403/05/12 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 08.05.2014 թվականի որոշումը:

սուբյեկտիվ իրավունքների պաշտպանությամբ, թե՛ օբյեկտիվ իրավակարգի պահպանմանը: Ընդ որում՝ դեռևս չի ձևավորվել մեկ միասնական մոտեցում: Հարկ է նկատել, որ այս դեպքում անխուսափելիորեն ծագում է **սուբյեկտիվ իրավունքների պաշտպանության և օրինականության միջև ընտրություն կատարելու, դրանցից մեկին նախապատվություն տալու խնդիր**¹⁴:

Մյուս կողմից՝ իրավական պետության կայացման գործընթացը դեռևս լուրջ խոչընդոտների է հանդիպում՝ հենց այն հիմքով, որ դեռևս համարժեք չի երաշխավորված դատական իշխանության հակակշռող դերն իշխանության այլ ճյուղերի առնչությամբ: Ըստ էության, դատական իշխանությունը դեռևս չի ընկալվում որպես իշխանության մյուս ճյուղերի նկատմամբ հակակշռող ազդեցություն ունեցող ինքնուրույն իշխանության ճյուղ, առավելագույնը քննարկվում է իշխանության մյուս ճյուղերի կողմից դատական իշխանության նկատմամբ միջամտությունները բացառելու հարցադրումները¹⁵: Այսպիսով՝ վարչարարության բողոքարկման իրավունքի իրացման համատեքստում դատարանի լիազորությունների, դատարանի կողմից վարչարարության ստուգման ինտենսիվության հարցի պարզաբանումը զուտ գիտական հարց չէ. այն վարչական արդարադատության էության, իշխանությունների բաժանման սկզբունքի՝ գործնականում պատշաճ իրացման տեսանկյունից կարևորագույն նշանակություն ունեցող հարցադրում է:

Եվրոպայի խորհրդի «Վարչարարությունը և դուք» ձեռնարկում նշվում է, որ վարչարարության բողոքարկման համատեքստում պետք է երաշխավորվի **առնվազն վարչարարության օրինականության ստուգման հնարավորությունը**՝ ընդգծելով, որ այն դեպքերում, երբ բողոքը քննող մարմնի իրավասությունը սահմանափակվում է վարչարարության օրինականության ստուգմամբ, վերջինս իրավունք չունի քննության առարկա դարձնել վարչական մարմնի **քաղաքականությանն առնչվող** հարցեր, այսինքն՝ այնպիսի հարցեր, որոնց որոշումը վարչական մարմնի իրավասության, հայեցողության տիրույթում է: Սա, սակայն, չի բացառում դատարանի՝ հայեցողության իրացման իրավաչափությունն ու հիմնավորվածությունն ստուգելու, վարչարարության՝ կոնկրետ գործի փաստական հանգամանքների համատեքստում հիմնավորվածությունն ստուգելու հնարավորությունը: Այլ կերպ ասած՝ հայեցողական լիազորությունների իրացման նկատմամբ դատական վերահսկողության շրջանակում դատարանի խնդիրն է պարզել՝ արդյո՞ք տվյալ վարչական մարմնի տվյալ գործելակերպն օրենքով վերջինիս

¹⁴ Տե՛ս Գ.Բ. Դանիելյան, «Վարչարական արդարադատության հասկացության բնորոշման նախադրյալները», էջ 5:

¹⁵ Տե՛ս ԱՊՀ մասնակից պետությունների միջխորհրդարանական վեհաժողով, սահմանադրական բարեփոխումների հայեցակարգի դրույթները և դրանց իրացման հիմնական ուղղությունները Հայաստանի Հանրապետությունում (գիտագործնական հետազոտություն), Երևան, Հայրապետ 2015, էջ 149, հասանելի է՝ <http://www.old.ysu.am/files/Book-Konst.pdf>, 04.12.2025թ. դրությամբ:

վերապահված լիազորությունների շրջանակում է¹⁶, ոչ թե այն, թե իր գործառույթային հնքնությունության ու գործադիր իշխանության էությունից բխող հայեցողական լիազորությունների շրջանակում գործադիր իշխանությունը կոնկրետ ինչպես պետք է գործեր:

Մյուս կողմից՝ ՄԻԵԴ-ն իր վճիռներում ընդգծել է, որ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի իմաստով դատական պաշտպանության իրավունքը երաշխավորված է միայն այն դեպքում, երբ անձի համար երաշխավորված է «ամբողջական յուրիսդիկցա» ունեցող տրիբունալի կողմից իր գործի քննության իրավունքը¹⁷: Սա իր հերթին ենթադրում է, որ դատարանը պետք է իրավասու լինի քննարկել իր կողմից քննվող վեճին առնչվող թե՛ փաստին, թե՛ իրավունքին վերաբերող հարցեր¹⁸: Մյուս կողմից՝ հատկապես վարչական ակտերի վիճարկման գործերով, ՄԻԵԴ-ի արձանագրմամբ, իրավունքի որոշ ճյուղերում, ինչպիսին է, օրինակ, քաղաքաշինական պլանավորումը, դատարանն օբյեկտիվորեն պետք է ունենա փաստի հարցերի քննարկման առավել սահմանափակ գործիքակազմ՝ ունենալով, սակայն, վարչական մարմինների այն ակտերն անվավեր ճանաչելու հնարավորություն, որոնք դրանց հիմքում ընկած փաստական հանգամանքներին անհամապատասխան են կամ ոչ ողջամիտ: Սա ՄԻԵԴ-ի կողմից վարչական որոշումների վերանայման շրջանակին առաջադրվող ընդհանուր չափանիշներից է¹⁹:

ՄԻԵԴ նախադեպային իրավունքում առանձնացվել են «ամբողջական իրավասություն» ունեցող դատարանին բնութագրական չափանիշները²⁰: Որոշելու համար, թե արդյոք վարչարարության դեմ ներկայացված բողոքը քննող դատարանը բավարարում է քննարկվող պահանջին, և իրականացրե՞լ է արդյոք վարչարարության վերանայում՝ անհրաժեշտ աստիճանի խորությամբ՝ ամբողջական իրավասությամբ, ՄԻԵԴ-ը հիմք է ընդունում հետևյալ չափանիշները.

1. Բողոքարկվող որոշմամբ քննարկվող հարցի բնույթը. այն դեպքերում, երբ վարչարարության բողոքարկման հիմքում ընդհանուր, մասնագիտացված տեխնիկական գիտելիք ենթադրող առանձին ոլորտներին վերաբերող հարցեր չեն, դատարանը պետք է ունենա գործն առավել խորությամբ քննելու իրավասություն.

¹⁶ Տե՛ս Committee of Ministers, “Recommendation CM/Rec(2007)7 on Good Administration” (ընդունվել է 2007 թվականի հուլիսի 11-ին) 5th Recital, 37-39-րդ պարբերություններ, հասանելի է՝ <https://rm.coe.int/1680700263>, 01.02.2026թ. դրությամբ:

¹⁷ Տե՛ս Beaumartin v. France, (Application no. [15287/89](#)), European Court of Human Rights, Judgment of November 24, 1994, § 38:

¹⁸ Տե՛ս Terra Woningen B.V. v. the Netherlands (Application no. [20641/92](#)), European Court of Human Rights, Judgment of December 17, 1996, § 52:

¹⁹ Տե՛ս Bryan v. the United Kingdom (Application no. [19178/91](#)), Judgment of November 22, 1995, §§ 44-47; Crompton v. the United Kingdom (Application no. [42509/05](#)), Judgment of May 10, 2010, §§ 70-73:

²⁰ Տե՛ս Sigma Radio Television Ltd v. Cyprus (Applications nos. [32181/04](#) and [35122/05](#)), Judgment of October 21, 2011, §§ 151-157:

2. Այն դեպքերում, երբ դատարանի կողմից գործի քննությանը նախորդել է վարչական այնպիսի ընթացակարգ, որի շրջանակում կողմի համար ապահովվել են Կոնվենցիայի 6-րդ հոդվածի համատեքստում բավարար ընթացակարգային երաշխիքներ, դատարանը կարող է կիրառել վերանայման առավել մեղմ ստանդարտ²¹.

3. Դատարանը պետք է ունենա այնքան իրավասություն, որ կարողանա անդրադառնալ բողոքի բոլոր հիմքերին՝ ըստ էության, կետ առ կետ՝ առանց ժխտելու դրանցից որևէ մեկի քննարկումը, ինչպես նաև իրավասություն և պարտականություն՝ բողոքը ցանկացած հիմքով մերժելու դեպքում այդ մերժումը հիմնավորելու.

4. Այն դեպքերում, երբ անձը վարչարարությունը բողոքարկում է միայն իրավունքի հարցերով, չի կարող դատարանից պահանջել քննարկել փաստի հարցեր²².

5. Դատարանը պետք է իրավասություն ունենա գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստերի վերաբերյալ ինքնուրույն դատողություններ անել. նման փաստական հանգամանքների վերաբերյալ ինքնուրույն եզրակացություն անելուց դատարանի հրաժարվելը կարող է դիտարկվել որպես Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի խախտում²³:

Ըստ ՄԻԵԴ-ի՝ վարչարարության դեմ բողոքը քննող դատարանը քննարկվող չափանիշին չի բավարարում, օրինակ, այն դեպքում, երբ իրավասություն ունենալով քննել մասնագիտական միավորումների կարգապահական պատասխանատվության ենթարկելու որոշումների իրավաչափության հարցը, չունի լիազորություն քննելու կիրառված սանկցիայի համաչափությունը թույլ տրված խախտումը²⁴: Մեկ այլ գործով ՄԻԵԴ-ը քննարկվող չափանիշին չբավարարող է համարել Ֆրանսիայի Պետական խորհրդի կողմից իր նախադեպային իրավունքի համատեքստում գործը քննելիս նախարարի կարծիքով պարտադիր առաջնորդվելը՝ առանց հնարավորություն ունենալու կասկածի տակ դնելու այդ կարծիքը կամ այն կողմերի քննարկմանը հանձնելու: Այս համատեքստում նախարարի ներգրավումը գործընթացին վճռորոշ նշանակություն ուներ ու, ըստ էության, կանխատեսում էր բողոքարկման գործընթացում կայացվելիք որոշման բովանդակությունը²⁵:

Այսպիսով՝ ՄԻԵԴ-ի կողմից առանձնացված վերոնշյալ չափանիշների համադրված վերլուծության արդյունքում կարող ենք եզրակացնել, որ վարչարարության բողոքարկման իրավունքը երաշխավորված կարող է լինել միայն այն դեպքում, երբ բողոքը քննող մարմինն իրավասու է իրականացնել ներկայացված բողոքի կամ հայցի

²¹ St' u Bryan v. the United Kingdom (Application no. [19178/91](#)), European Court of Human Rights, §§ 46-47:

²² St' u Potocka and Others v. Poland (Application no. [33776/96](#)), European Court of Human Rights, Judgment of March 27, 2002, § 57:

²³ St' u Terra Woningen B.V. v. the Netherlands (Application no. [20641/92](#)), European Court of Human Rights, Judgment of December 17, 1996, §§ 53-55:

²⁴ St' u Zumtobel v. Austria (Application no. [12235/86](#)), European Court of Human Rights, Judgment of September 21, 1993, §§ 29-30:

²⁵ St' u Chevrol v. France (Application no. [49636/99](#)), European Court of Human Rights, Judgment of May 13, 2003, §§ 81-82:

բոլոր հիմքերի ամբողջական և պատշաճ քննություն, այդ թվում՝ վարչական ակտի կայացման հիմք հանդիսացած փաստական հիմքերի վիճարկման դեպքում ինքնուրույն պարզել այդ հիմքերի առկայության հարցը, պարզել, որպես ընդհանուր կանոն, վարչարարության իրականացման հիմք հանդիսացած՝ իրավասու մարմինների առանձին ակտերի կամ գործողությունների իրավաչափությունը, մյուս կողմից՝ վարչական մարմնի հայեցողական լիազորությունների վերաբերյալ գործեր քննելիս քննարկել հայեցողական առանձին լիազորության ընտրության իրավաչափության, այդ թվում՝ գործի փաստական հանգամանքներին համապատասխանության հարցերը: Սակայն ՄԻԵԴ դիրքորոշումների համատեքստում դատարանի քննության առարկա չպետք է դառնան գործադիր իշխանության բացառիկ լիազորությունը համարվող՝ քաղաքականության հարցերը՝ այն ոլորտներում վարչական մարմինների կայացրած որոշումների հարցերը, որտեղ գործադիր իշխանությունն ինքը, իշխանությունների բաժանման սկզբունքին համահունչ, ազատ է որոշելու իր քաղաքականությունը, չպետք է վերաբերական դատարանի կողմից քննության առարկա դառնան: Վերջին դեպքերն առավելապես վերաբերում են նորմատիվ վարչարարության վիճարկմանը, մինչդեռ վերոնշյալ ընդհանուր պահանջները վերաբերում են հավասարապես թե՛ նորմատիվ և թե՛ անհատական ազդեցություն ունեցող վարչարարության բողոքարկմանը:

Վերոգրյալի հիման վրա կարելի է առանձնացնել անհատական վարչական ակտերի, վարչական մարմինների գործողությունների կամ անգործության կամ անհատական ազդեցություն ունեցող վարչարարության բողոքարկման դեպքում բողոքարկման և վերանայման սահմանների որոշման ընդհանուր կանոնը: Մասնավորապես, **վարչարարության բողոքարկման իրավունքը գործնականում երաշխավորված և արդյունավետ կարող է համարվել միայն այն դեպքում, երբ վարչական բողոքը քննող վարչական մարմինը և դատարանն օրենսդրությամբ և գործնականում օժտված են վարչարարության դեմ ներկայացված բողոքի (հայցի) բոլոր փաստական հիմքերի հիմնավորվածությունն ստուգելու իրական հնարավորությամբ, բողոքարկվող վարչարարության իրավաչափությունը, այդ թվում՝ օրենքի նորմերի ճիշտ մեկնաբանված լինելը, կիրառման ենթակա նորմերը կիրառված լինելը, կիրառված նորմերի՝ վարչարարության փաստական հանգամանքներին համապատասխանությունն ստուգելու իրական և արդյունավետ հնարավորությամբ, բողոքարկվող վարչարարության փաստական հիմքերի առկայությունն ստուգելու հնարավորությամբ, վարչարարության հիմք հանդիսացող՝ առանձին վարչական մարմինների կամ պաշտոնատար անձանց ակտերի կամ գործողությունների իրավաչափությունն ստուգելու հնարավորությամբ, վարչական մարմնի հայեցողական լիազորությունների իրացման հիմքով իրականացված վարչարարության իրավաչափության վերաբերյալ գործեր քննելիս՝ ընտրված հայեցողական լիազորության իրավաչափության (այդպիսի լիազորության առկայության) և իրացված լիազորության՝ կոնկրետ գործի փաստական հանգամանքներին համապատասխանության հարցը:**

Մեկ այլ կողմից՝ մենք համակարծիք ենք հայրենական գիտական աղբյուրներում արտահայտված այն տեսակետին, որ վարչական հայեցողության իրականացման համաչափությունը գնահատելիս վարչական դատարանը չպետք է վարչական մարմնի որոշումներն ու գնահատումները փոխարինի սեփական որոշումներով և գնահատումներով. վարչական դատարանը պարտավոր է հարգանք դրսևորել վարչական մարմնի կողմից համաչափության տարբեր պահանջների գնահատումների նկատմամբ, և որ վարչարարության համաչափության վերանայումն իրականացնելիս դատարանը պարտավոր է հարգանք ցուցաբերել վարչական մարմնի գնահատումների նկատմամբ միայն հարգանքը պայմանավորող հանգամանքների առկայության դեպքում: Ընդ որում՝ ինչպես իրավացիորեն ընդգծել է Ք. Ալեքսանյանը, եթե դատարանը որոշում է հարգանք դրսևորել վարչական մարմնի գնահատումների և ընտրության նկատմամբ, նա պետք է հիմնավորի, թե ինչ հիմքերով են պայմանավորված հարգանքի դրսևորումն ու դատական վերանայման սահմանափակումը²⁶:

Ինչ վերաբերում է նորմատիվ վարչարարության բողոքարկմանը, ապա այս համատեքստում, կարծում ենք, վարչարարության նկատմամբ օբյեկտիվ վերահսկողություն - սուբյեկտիվ իրավունքների պաշտպանություն հարաբերակցության, մյուս կողմից՝ վարչարարության բողոքարկման իրավունք-իշխանությունների բաժանման և հավասարակշռման սկզբունք հարաբերակցության հարցերն առավել բազմաշերտ ու խոր դրսևորումներ ունեն: Նշված հարցերն առավել արդիական են նաև Հայաստանի Հանրապետությունում, երբ թե՛ օրենսդրական և թե՛ գործնական մակարդակում հաճախ հանդիպում են նորմատիվ իրավական ակտերի վիճարկման վերաբերյալ դրույթներ ու փորձեր, որոնց հիմքում, օրինակ, ոչ այնքան վարչարարության համապատասխանությունն է օրենսդրական համապատասխան կարգավորումներին կամ դրա արդյունքում անձի կոնկրետ իրավունքի խախտումը, այլ վարչական մարմնի ընտրած քաղաքականության հիմնավորվածությունը կամ նպատակահարմարությունը:

Ասվածի վառ օրինակ է, մասնավորապես, «Հանրության գերակա շահերի պաշտպանության նպատակով սեփականության օտարման մասին» օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետը, որի համաձայն՝ ի թիվս այլնի, որպես հանրության գերակա շահի որոշման սկզբունք, նախատեսվում է հանրության գերակա շահի **առկայության փաստը** դատական կարգով վիճարկվելու հնարավորության առկայությունը: ՀՀ Սահմանադրության 60-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ հանրության գերակա շահերի ապահովման նպատակով սեփականության օտարումն իրականացվում է օրենքով սահմանված բացառիկ դեպքերում և կարգով՝ միայն նախնական և համարժեք փոխհատուցմամբ: Ակնհայտ է, որ Սահմանադրության քննարկվող նորմի համատեքստում օտարվող սեփականության սեփականատիրոջ կամ

²⁶ Տե՛ս Ք. Ալեքսանյան, Վարչարարության համաչափության գնահատման արդի հիմնահարցերը վարչական բողոքարկման և դատական վերանայման համատեքստում, Պետություն և իրավունք N 2 (93) 2022, հասանելի է հետևյալ հղումով՝ <https://u.to/mKF0lq>

այլ շահագրգիռ անձանց համար պետք է հնարավոր լինի վիճարկել գերակա շահ ճանաչելու վերաբերյալ կառավարության որոշումը՝ օրենքով սահմանված բացառիկ դեպքերի առկայությունը հիմնավորված լինելու հիմքով, օրինակ՝ նշված որոշումը վիճարկել՝ օրենքով նախատեսված՝ հանրության գերակա շահի նպատակներից որևէ մեկի չհիմնավորվածության հիմքով: Սակայն նշված նորմը, ըստ էության, ամրագրում է նաև շահագրգիռ անձի իրավունքը՝ դատարանում կառավարության քննարկվող որոշումը վիճարկել, օրինակ, այն հիմքով, որ օրինակ, հիվանդանոցի կառուցումը չի կարող համարվել հանրության գերակա շահ:

Այսպիսով, այս համատեքստում վարչարարության բողոքարկման իրավունքի և գործադիր իշխանության լիազորությունների իրականացմանը դատական իշխանության միջամտության կարևորագույն սահմանը վարչարարության օրինականության, հիմնավորվածության, ընդունման ընթացակարգի պահպանվածության, ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտի՝ օրենքին համապատասխան լինելու ստուգումն է՝ առանց քննարկելու այն հարցը, թե իրավաչափ, հիմնավորված ու արդարացի՞ է արդյոք գործադիր իշխանության կողմից կոնկրետ այս և ոչ թե այլ քաղաքականությունն ընտրելը (օրինակ՝ սոցիալական աջակցություն տրամադրելը բնակչության ոչ թե ընտրված, այլ մեկ այլ խմբի): Միաժամանակ, բողոքարկման ինստիտուտի և դատական վերանայման մյուս սահմանագիծը գործադիր իշխանության կողմից ենթաօրենսդրական համապատասխան ակտն ընդունելիս օրենքով սահմանված ենթաօրենսդրական ակտ ընդունելու լիազորության շրջանակի պահպանումն է, ինչպիսի հարցի քննարկումը ոչ միայն միջամտություն չի կարող համարվել գործադիր իշխանության լիազորություններին, այլև օրինականության սկզբունքի կարևորագույն երաշխիք է, ինչպես նաև բողոքարկման իրավունքի՝ գործնականում արդյունավետ իրացման երաշխիք:

Հատկանշական է ի սկզբանե դատական վերանայման առավել լայն սահմաններ ճանաչող Մեծ Բրիտանիայի և Ամերիկայի Միացյալ Նահանգների փորձը: Մեծ Բրիտանիայում բյուջետային միջոցների բաշխման համատեքստում վարչարարության բողոքարկման համակարգի հիմքում ընկած կարևորագույն սկզբունքն է՝ դատարանը կարող է պահանջել բյուջեի բաշխման իրականացում պատշաճ հիմնավորմամբ, գործադիր իշխանության լիազորությունների շրջանակում, սակայն որևէ դեպքում չի կարող անվավեր ճանաչել համապատասխան ակտը և ինքն իրականացնել բյուջետային միջոցների վերաբաշխում²⁷: ԱՄՆ-ում չնայած դատարաններն իրավասու են ստուգել քննարկվող ոլորտներում վարչարարության պատճառաբանվածությունը, տարիներ շարունակ գործել է այն մոտեցումը, որ վերջիններս չեն կարող կասկածի տակ առնել և քննարկման առարկա դարձնել քաղաքական առաջնահերթությունների որոշման և ռեսուրսների բաշխման ոլորտում գործադիր իշխանության մասնագիտացվածություն

²⁷ *St' u R v Cambridge Health Authority, ex part B* [1995] 1 WLR 898 (CA):

պահանջող հարցերը²⁸: Ամերիկյան դատարանները տարիներ շարունակ հավատարիմ են մնացել «վարչական պետության» ու գործադիր իշխանության մասնագիտացվածության հարգման սկզբունքներին, ինչը, սակայն, լիովին նոր բովանդակություն ստացավ 2024 թվականին, երբ Գերագույն դատարանն իր նոր որոշմամբ փոխեց մինչ այժմ կիրառվող ստանդարտը ու դատարաններին հնարավորություն տվեց որոշ դեպքերում կասկածի տակ առնել նաև «քաղաքականության ընտրությունները»²⁹։ ԱՄՆ Գերագույն դատարանն իր այս որոշմամբ, ըստ էության, համաշխարհային մակարդակով նորմատիվ վարչարարության իրավաչափության ստուգման և դատական իշխանություն – գործադիր իշխանության բացարձակ լիազորության տիրույթում գտնվող հարց հարաբերակցության տեսանկյունից նոր չափանիշ ու սկզբունք է առաջադրում։

Այսպիսով, չնայած նրան, որ ժողովրդավարական հասարակությունում վարչարարության բողոքարկման ինստիտուտն իր զարգացման ներկայիս մակարդակում անպայմանորեն ներառում է նաև նորմատիվ վարչարարության բողոքարկման սուբյեկտին առաջադրվող չափանիշներին բավարարող անձի կողմից վարչարարության բողոքարկման իրավունքը, նշված իրավունքը չի կարող մեկնաբանվել որպես նորմատիվ վարչարարության նկատմամբ ամբողջական և համապարփակ դատական վերահսկողության հնարավորություն։ Նորմատիվ վարչարարության դատական վերանայումն իշխանությունների բաժանման սկզբունքի և գործադիր իշխանության գործառույթային ինքնուրույնության համաատեքստում պետք է ունենա բացառապես օրենդրությամբ սահմանված շրջանակներում նորմատիվ վարչարարության օրինականության նկատմամբ հսկողության բովանդակություն։ Տեղին է հիշատակել Ֆրանսիայի Պետական խորհրդի ձևավորած՝ վարչարարության նկատմամբ դատական վերահսկողության հստակ և խիստ սահմանը, որի համաձայն՝ դատավորը վերահսկում է օրինականությունը, ոչ թե կառավարման արվեստը³⁰։

Այս համատեքստում նորմատիվ վարչարարության նկատմամբ դատական վերահսկողության թույլատրելի սահմանները պետք է հիմնված լինեն երեք հիմնական սկզբունքների վրա, որոնք պայմանականորեն կանվանենք վարչարարության վերահսկողության «դրական» սահմաններ։

²⁸ Տե՛ս Johnson, M. (2025). *An Introduction to Judicial Review of Federal Agency Action*. Congressional Research Service Report R44699, հասանելի է՝ <https://www.congress.gov/crs-product/R44699>, 01.02.2026թ. դրությամբ։

²⁹ Տե՛ս *Loper Bright Enterprises, et al. v. Raimondo, Secretary of Commerce, et al.*, No. 22-451, U.S. Supreme Court (2023), հասանելի է՝ https://www.supremecourt.gov/opinions/23pdf/22-451_7m58.pdf, 01.02.2026թ. դրությամբ։

³⁰ Տե՛ս, օրինակ, Conseil d'État, *Gomel*, April 4, 1914, Rec. Lebon 308, հասանելի է՝ <https://www.conseil-etat.fr/fr/arianeweb/?q=gomel>, Conseil d'État, *Camino*, January 14, 1916, Rec. Lebon 39, հասանելի է՝ <https://www.conseil-etat.fr/>, Conseil d'État, Ass., *Dahan*, November 13, 2013, n°347704, հասանելի է՝ <https://www.conseil-etat.fr/fr/arianeweb/?q=347704>, հասանելի են 01.02.2026թ. դրությամբ։

1. Դատարանը կարող է քննարկել վիճարկվող նորմատիվ իրավական ակտի կամ դրա վիճարկվող դրույթի **օրինականությունը**՝ դրա համապատասխանությունն առավել բարձր իրավաբանական ուժ ունեցող ակտերին:

2. Դատարանը պետք է իրավասություն ունենա քննարկել վիճարկվող նորմատիվ իրավական ակտի **ընդունման ընթացակարգի պահպանվածությունը**, այդ թվում՝ հանրային քննարկման, կարգավորման ազդեցության գնահատման, հիմնավորվածության և օրենքով սահմանված այլ պարտադիր ընթացակարգերի պահպանվածությունը:

3. Այն դեպքերում, երբ նորմատիվ իրավական ակտը կոնկրետ սուբյեկտի կողմից բողոքարկվելու հիմքում այդ սուբյեկտի իրավական շահագրգռվածությունն է, դատական վերահսկողությունն ընդարձակվում է և ներառում է նաև քննարկվող նորմով **անձի իրավունքներին անթույլատրելի, ոչ իրավաչափ միջամտության առկայության ստուգումը**:

Նորմատիվ իրավական ակտերի իրավաչափության ստուգման մյուս, «բացասական» սահմանն այն է, որ դատարանները որևէ դեպքում չեն կարող ստուգել նորմատիվ իրավական ակտի արդարացիությունը, նպատակահարմարությունը, գործադիր իշխանության հայեցողության տիրույթում գտնվող քաղաքական որոշումների հիմնավորվածությունը, քննարկել այն հարցը, թե ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտ ընդունելու իր լիազորությունն իրականացնելիս համապատասխան վարչական մարմինն այն պետք է իրացներ ոչ թե ընտրված, այլ ուրիշ ձևով՝ ընտրելով այլ քաղաքականություն (օրինակ՝ սոցիալական աջակցություն տրամադրելով այլ խմբի): Այլ կերպ ասած՝ վարչարարության բողոքարկման ինստիտուտը չի կարող մեկնաբանվել որպես քաղաքական որոշում ու վարչաիրավական հայեցողություն ենթադրող հարցերում դատարանի կողմից գործադիր իշխանության ընտրած քաղաքականության հիմնավորվածության քննարկում, այն է՝ այնպիսի հարցերի քննարկում, որոնք ի սկզբանե գործադիր իշխանության իրավասության տիրույթում են:

Մյուս կողմից՝ չնայած դատարանները «քաղաքական իմաստնությունը» քննարկելու լիազորություն չունեն՝ նորմատիվ վարչարարության դեմ բողոք քննող դատարանը որպես վարչարարության բողոքարկման ինստիտուտի համատեքստում «ամբողջական իրավազորություն» ունեցող դատարանի պահանջին կարող է բավարարել միայն այն դեպքում, երբ ունի ամբողջական, օրենսդրորեն երաշխավորված և գործնականում արդյունավետ գործիքակազմ՝ քննարկման առարկա դարձնելու այն հարցը, թե արդյո՞ք համապատասխան վարչական մարմինը գործել է իր լիազորությունների շրջանակում. դատարանին նման գործիքակազմով օժտելը իրավական օրինականության սկզբունքի երաշխավորման կարևորագույն բաղադրատարր է և դրա գործնականում իրացման կառուցակարգ:

Այսպիսով, սույն գլխական հոդվածի շրջանակում վերը շարադրված վերլուծության արդյունքում հանգում ենք հետևյալ եզրակացություններին.

1. Վարչարարության բողոքարկման իրավունքը չի կարող փոխկապակցվածության կամ կախվածության մեջ դրվել վարչարարության դրսևորման օրենսդրական դասակարգումներից և վարչարարության կոնկրետ «ձևական» արտահայտությունից: Բոլոր այն դեպքերում, երբ բողոքարկման օբյեկտը վարչական մարմնի՝ արտաքին ներգործություն ունեցող և անձի իրավունքներին ու օրինական շահերին վերջինիս բողոքարկման իրավունքով օժտելու համար անհրաժեշտ չափով առնչություն ունեցող որևէ ակտ, գործողություն, անգործություն կամ վարչարարության (լայն առումով) իրականացման որևէ այլ ձև է, վարչարարության բողոքարկման իրավունքն առկա է, և այն չի կարող սահմանափակվել կամ բացառվել միայն այն հանգամանքից ելնելով, որ բողոքարկվող ակտը, փաստաթուղթը կամ գործողությունն օրենսդրությամբ նույնաբնույթ ակտին առաջադրվող ձևին չի համապատասխանում. անձի իրավունքների վրա վարչարարության ազդեցությունը պետք է որոշվի ոչ թե դրա արտահայտման ձևով, այլ բովանդակությամբ:

2. Վարչարարության բողոքարկման ինստիտուտը չի կարող մեկնաբանվել որպես քաղաքական որոշում ու վարչաիրավական հայեցողություն ենթադրող հարցերում դատարանի կողմից գործադիր իշխանության ընտրած քաղաքականության հիմնավորվածության քննարկում, այն է՝ այնպիսի հարցերի քննարկում, որոնք ի սկզբանե գործադիր իշխանության իրավասության տիրույթում են: Դատարանները որևէ դեպքում չեն կարող ստուգել նորմատիվ իրավական ակտի արդարացիությունը, նպատակահարմարությունը, գործադիր իշխանության հայեցողության տիրույթում գտնվող քաղաքական որոշումների հիմնավորվածությունը. օրինականության սահմաններում կայացված, վարչական մարմինների սահմանադրական լիազորությունների տիրույթում գտնվող «քաղաքական նախընտրությունները» դատական վերահսկողության առարկա չեն կարող լինել:

OBJECTS OF APPEAL AND LIMITS OF EXERCISING THE RIGHT TO APPEAL AND REVIEWING THE LEGALITY OF ADMINISTRATIVE ACTION

GEGHAMYAN ELINA

Lecturer at the Chair of Constitutional Law,
Faculty of Law, Yerevan State University,
Head of the Legal Department, “TOWER INTERNATIONAL CONSULTANTS” CJSC

Abstract. This article examines the scope, and limits of the right to challenge administrative action as a fundamental component of the right to good administration and effective judicial protection. Drawing on the jurisprudence of the European Court of Human Rights, the Court of Justice of the European Union, and comparative administrative law (Germany, France, the United Kingdom, the United States, and Canada), the article demonstrates that the scope of appealable administrative acts must be determined by their legal and factual impact on individual rights rather than by their formal classification.

Furthermore, the article explores the substantive dimension of the right to challenge administrative action, focusing on the permissible intensity of judicial review. It proposes a balanced model that ensures effective protection of subjective rights while respecting the separation of powers and administrative discretion. As a result, the author concludes that judicial review of administrative action by a court of full jurisdiction, while ensuring the necessary level of scrutiny of the lawfulness of administrative actions, must exclude the court’s assessment of the substantiation of the policy chosen by the executive in matters involving political decisions and administrative discretion, namely, issues that fall, by their very nature, within the competence of the executive branch.

Keywords: appeal against administrative action, court of full jurisdiction, separation of powers, scope and intensity of judicial review, objects of administrative appeal.

ОБЪЕКТЫ ОБЖАЛОВАНИЯ, ПРЕДЕЛЫ РЕАЛИЗАЦИИ ПРАВА НА ОБЖАЛОВАНИЕ И ПРОВЕРКИ ЗАКОННОСТИ АДМИНИСТРАТИВНОЙ ДЕЯТЕЛЬНОСТИ

ГЕГАМЯН ЭЛИНА

Преподаватель кафедры конституционного права юридического факультета
Ереванского государственного университета,
начальник юридического отдела ЗАО «TOWER INTERNATIONAL CONSULTANTS»

Аннотация. Статья посвящена исследованию содержания и пределов права на обжалование административной деятельности как неотъемлемого элемента права на надлежащее администрирование и эффективную судебную защиту. На основе анализа практики Европейского суда по правам человека, Суда Европейского союза и сравнительного административного права обосновывается вывод о том, что круг обжалуемых актов должен определяться не их формальной квалификацией, а фактическим и юридическим воздействием на права и законные интересы лица.

Отдельная часть статьи посвящена содержательным пределам судебного контроля за административной деятельностью. Предлагается модель судебного пересмотра, обеспечивающая защиту субъективных прав при одновременном соблюдении принципа разделения властей и уважении административного усмотрения. В результате автор приходит к выводу, что судебное обжалование административной деятельности судом с полной юрисдикцией, наряду с обеспечением необходимой степени проверки законности административных актов, должно исключать оценку судом обоснованности политики, избранной исполнительной властью, по вопросам, предполагающим политическое решение и административное усмотрение, то есть по вопросам, которые по своей природе относятся к компетенции исполнительной власти.

Ключевые слова: обжалование административной деятельности, суд полной юрисдикции, разделение властей, объем и степень (интенсивность) судебного контроля», объекты обжалования.

Օգտագործված գրականության ցանկ

1. ԱՊՀ մասնակից պետությունների միջխորհրդարանական վեհաժողով, *Սահմանադրական բարեփոխումների հայեցակարգի դրույթները և դրանց իրացման հիմնական ուղղությունները Հայաստանի Հանրապետությունում* (գիտագործական հետազոտություն), Երևան, Հայրապետ, 2015, էջ 149, հասանելի է՝ <http://www.old.y-su.am/files/Book-Konst.pdf> (08.02.2026թ. դրությամբ):

2. Ալեքսանյան Ք., «Վարչարարության համաչափության գնահատման արդի հիմնահարցերը վարչական բողոքարկման և դատական վերանայման համատեքստում», *Պետություն և իրավունք*, N 2 (93), 2022, հասանելի է՝ <https://artsakhlib.am/en/2024/11/27/08.02.2026թ.դրությամբ>։
3. Գ. Բ. Դանիելյան, Վարչական արդարադատության հասկացության բնորոշման նախադրյալները, «Բանբեր Երևանի համալսարանի», 1 (112), Երևան 2004թ., էջ 7-20, էջ 5, հասանելի է՝ http://www.old.yasu.am/files/02G_Danielyan.pdf, (08.02.2026թ. դրությամբ)։
4. ՀՀ Սահմանադրական դատարանի որոշումներ՝ ՍԴՈ-1127 (10.12.2013), ՍԴՈ-1190 (10.02.2015), ՍԴՈ-1192 (03.03.2015), ՍԴՈ-1220 (16.06.2015), ՍԴՈ-1222 (26.06.2015), ՍԴՈ-1257 (10.03.2016)։
5. Կարինե Զլավյանն ընդդեմ ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի գործով ՎՃճաբեկ դատարանի 08.05.2014թ. թիվ ՎԴ/6403/05/12, վարչական գործով որոշումը։
6. Beaumartin v. France, Application no. 15287/89, European Court of Human Rights, Judgment of 24 November 1994.
7. Bellet v. France, Application no. 23805/94, European Court of Human Rights, Judgment of 4 December 1995.
8. Bennett v. Spear, 520 U.S. 154 (1997).
9. Bryan v. the United Kingdom, Application no. 19178/91, European Court of Human Rights, Judgment of 22 November 1995.
10. Canada (Minister of Citizenship and Immigration) v. Vavilov, 2019 SCC 65.
11. Chevrol v. France, Application no. 49636/99, European Court of Human Rights, Judgment of 13 May 2003.
12. Conseil d'État, Dame Lamotte (1950) Rec. 110.
13. Conseil d'État, Gomel, 4 April 1914, Rec. Lebon 308.
14. Conseil d'État, Camino, 14 January 1916, Rec. Lebon 39.
15. Conseil d'État, Ass., Dahan, 13 November 2013, n°347704.
16. Crompton v. the United Kingdom, Application no. 42509/05, European Court of Human Rights, Judgment of 10 May 2010.
17. Committee of Ministers, 'Recommendation CM/Rec(2007)7 on Good Administration' (11 July 2007), 5th Recital, paras. 37–39, <https://rm.coe.int/1680700263> (01.02.2026թ. դրությամբ)։
18. Dumitru Gheorghe v. Romania, Application no. 33883/06, European Court of Human Rights, Judgment of 12 April 2016.
19. Golder v. the United Kingdom, Application no. 4451/70, European Court of Human Rights, Judgment of 21 February 1975.
20. Johnson, M., An Introduction to Judicial Review of Federal Agency Action, Congressional Research Service Report R44699 (2025).
21. Loper Bright Enterprises v. Raimondo, No. 22-451, U.S. Supreme Court (2023).
22. Malhous v. the Czech Republic, Application no. 33071/96, European Court of Human Rights, Judgment of 12 July 2001.
23. Miragall Escolano and Others v. Spain, Applications nos. 38366/97 et al., European Court of Human Rights, Judgment of 25 April 2000.

24. Nunes Dias v. Portugal, Application no. 69829/01, European Court of Human Rights, Judgment of 10 April 2003.
25. Pérez de Rada Cavanilles v. Spain, Application no. 116/1997/900/1112, European Court of Human Rights, Judgment of 28 October 1998.
26. Potocka and Others v. Poland, Application no. 33776/96, European Court of Human Rights, Judgment of 27 March 2002.
27. Rivero, J., Waline, J., *Droit administratif*, 23rd edn, Dalloz, 2006.
28. RTBF v. Belgium, Application no. 50084/06, European Court of Human Rights, Judgment of 15 September 2011.
29. R v Cambridge Health Authority, ex parte B [1995] 1 WLR 898 (CA).
30. Sigma Radio Television Ltd v. Cyprus, Applications nos. 32181/04 and 35122/05, European Court of Human Rights, Judgment of 21 October 2011.
31. Sotiris and Nikos Koutras ATTEE v. Greece, Application no. 39442/98, European Court of Human Rights, Judgment of 16 February 2001.
32. Stelkens, U. et al. (eds), *German Administrative Law: Introduction*, German Law Archive (2018), <https://germanlawarchive.iuscomp.org/?p=353> (01.02.2026թ. դրությամբ).
33. Terra Woningen B.V. v. the Netherlands, Application no. 20641/92, European Court of Human Rights, Judgment of 17 December 1996.
34. Verwaltungsgerichtsordnung (VwGO) 1960, §§ 42–113.
35. Zumtobel v. Austria, Application no. 12235/86, European Court of Human Rights, Judgment of 21 September 1993.

Հոդվածը գրախոսվել է 19.01.2026
Ներկայացվել է տպագրության 22.01.2026